

կամ ի մօտանի՝ իբրեւ զոչխարս ի վա-  
րախի: Իսկ գնօղքն եկեալ բանային զերեսս <sup>295</sup>  
եւ զծոցս կոյս աղջկանց եւ զամենայն մար-  
մինս նոցա շօշափէին յոտաց մինչ ի գլուխ,  
զի մի քոս, խոց կամ այլ ինչ սպի կամ վէր  
ունիցին: Եւ նոքա լուռ եւ անմոռունչ կային.  
եւ զորս հաճէին՝ գնէին. եւ որոշեալ ի հօրէ, <sup>300</sup>  
ի մօրէ կամ ի քերբց եւ յեղբարց բաժանեալ  
առեալ տանէին ի տուն: Եւ ես տեսեալ զայս  
ամենայն աղէտս ցաւաղինս, զոր բնաւ չէի  
տեսեալ, ցաւաց զլուխ իմ, զողաց սիրտ իմ,  
խոռովեցաւ անձն իմ եւ ամենայն ոսկերք իմ <sup>305</sup>  
սասանեցան. եւ ոչ իշխէի հարցանել կամ  
մերձենալ առ գերեալսն, թէպէտ զլեզուս  
նոցա զիտէի՝ վասն ահի Տաճկաց: Վասն որոյ  
արտասուաթոր աչօք եւ տխուր դիմօք հայե-  
ցեալ յերկինս յոգոց հանեալ ասեմ. ո՛հ ո՛հ <sup>310</sup>  
եւ եղուկ տառապելոյս. լաւ էր թէ չէի ծնեալ  
կամ թէ չէի եկեալ աստ, քան թէ տեսի ես  
զայսպիսի աղիողորմ խեղճս աչօք իմովք:  
Եւ ասեմ. Ո՛վ տէր իմ եւ ստեղծիչ, մինչեւ  
յե՞րբ մոռանաս զմեզ ի սպառ եւ մինչեւ յե՞րբ <sup>315</sup>  
դարձուցանես զերեսս քո ի մէնջ. ընդէ՞ր  
մատնեցեր զմեզ ի ձեռս թշնամեաց հեթա-  
նոսաց, անօրինաց, խստաց եւ ապստամբո-  
ղաց: Թէպէտ մեղաք, անօրինեցաք եւ յան-  
ցեաք, եւ զպատվիրանս քո ոչ պահեցաք, <sup>320</sup>  
այլ գին եմք անապական արեան քո. գբեզ